02/06/2026թ.

«Շահիր Airpods 4 MyAmeria Star-ի հետ» գովազդային վիճակախաղի մասնակցության պայմաններ

1. Գովազդային վիճակախաղը (այսուհետ՝ Վիճակահանություն) անցկացվում է «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Կազմակերպիչ կամ Բանկ) կողմից:
2. Վիճակահանության ներքոգրյալ բոլոր պայմանների պահպանման դեպքում մասնակիցները (այսուհետ՝ Մասնակից) հնարավորություն են ունենում ստանալու 5 հատ Apple Airpods 4 ականջակալներից մեկը:
3. Վիճակահանությանը կարող են մասնակցել 6-ից մինչև 18 տարեկան (6 տարին լրանալուց հետո և մինչև 18 տարին լրանալը, ընդ որում, եթե Վիճակահանության ժամկետի ընթացքում լրանում է Մասնակցի 18 տարեկանը, վերջինս շարունակում է համարվել Վիճահանության մասնակից) ֆիզիկական անձինք, որոնք Վիճակահանության ժամկետի ընթացքում՝ 2026թ. հունիսի 2-ի Երևանի ժամանակով 00:01-ից մինչև 2026թ. հունիսի 22-ի Երևանի ժամանակով ժամը 23:59 ներառյալ.
    - կհետևեն «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ «MyAmeriaStar» պրոդուկտի ինստագրամյան էջին՝ https://www.instagram.com/myameriastar/
    - Վիճակահանության հրապարակման մեկնաբանության դաշտում թողնելով 1 մեկնաբանություն՝ նշելով (tag) իրենց երեք ինստագրամյան ընկերներին, ընդ որում՝ յուրաքանչյուր Մասնակից կարող է թողնել միայն 1 մեկնաբանություն,
    - Սթորի, հրապարակում կամ ռիլ ֆորմատով նյութ կտեղադրեն իրենց էջում՝ նշելով @myameriastar ինստագրամյան էջը, և որում կերևա MyAmeria Star պրոդուկտի հետ առնչվող որևէ նյութ՝ բանկային քարտ, հավելված, պրոդուկտի բրենդինգով որևէ իր և այլն: Ընդ որում, սթորի տեղադրելու դեպքում այն անհրաժեշտ է

պահպանել 24 ժամ, իսկ հաղթող ճանաչվելու դեպքում ներկայացնել սթորիի 24 ժամ պայմանը պահպանելու հաստատումը՝ սթորիի արխիվացված նկարը:

4. Վիճակախաղի ամբողջ ժամանակահատվածում ներառյալ ամփոփման ժամանակահատվածը (2026թ. հունիսի 2-ից Երևանի ժամանակով 00:01-ից մինչև 2026թ. հունիսի 22-ը Երևանի ժամանակով 14:00) Մասնակցի էջը պետք է լինի բաց, նշումները՝ տեսանելի ու երևացող չափով:
5. Վիճակահանության արդյունքների ամփոփումը տեղի կունենա ս.թ. հունիսի 25-ին՝ Երևանի ժամանակով ժամը 14:00-ին, իսկ Մրցույթի հաղթողները կհայտարարվեն MyAmeria Star ինստագրամյան էջի սթորի բաժնում էկրանի տեսագրության (screen recording) միջոցով: Ընդ որում, Վիճակահանության մասնակցության դեպքում համարվում է, որ Մասնակցի օրինական ներկայացուցիչը տվել է իր համաձայնությունը Մասնակցի՝ Վիճակահանությանը մասնակցելու, իսկ հաղթող ճանաչվելու դեպքում նրա ինստագրամյան էջի անունը հրապարակելու վերաբերյալ:
6. Վիճակահանության հաղթող կճանաչվեն այն 5 Մասնակիցները, ում անունները պատահականության սկզբունքով՝ Comment picker գործիքի միջոցով կընտրվեն Վիճակահանության ամփոփման ընթացքում:
7. Հաղթող Մասնակիցների հետ Բանկը «MyAmeriaStar» ինստագրամյան էջով կապ կհաստատի՝ հաղորդագրություն ուղարկելով հաղթող ճանաչված Մասնակցին և ներկայացնելով մրցանակի ստացման եղանակը և վայրը:
8. Մրցանակը ստանալու համար հաղթող Մասնակիցը անձամբ պետք է օրինական ներկայացուցչի (կամ վերջինիս կողմից տրամադրված լիազորագրի հիման վրա վերջինիս լիազորված անձի) հետ մոտենա Բանկի «Կամար» մասնաճյուղ (հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 2, «Կամար» բիզնես կենտրոն)՝ ներկայացնելով Մասնակցի և օրինական ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթը մինչև 2026թ. հուլիսի 25-ը ներառյալ:

9. Նշված ժամկետում չներկայանալու դեպքում հաղթող ճանաչված Մասնակիցը զրկվելու է իր մրցանակից, եթե մինչև սույն պայմանների 8-րդ կետում նշված ժամկետի լրանալը վերջինս կամ իր օրինական ներկայացուցիչը նախապես գրավոր չի համաձայնեցրել Բանկի հետ մրցանակն ավելի ուշ ստանալու հնարավորությունը, ժամկետները և կարգը:

Գովազդային վիճակախաղի կազմակերպիչ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 2
Հեռ.՝ 010 561111

www.ameriabank.am

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից